

# ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի շնորհավորանքի խոսքը ՀՀ Սահմանադրության օրվա առթիվ

05.07.2021

Հարգելի՛ հայրենակիցներ

Հայաստանի Հանրապետության մայր օրենքը համաժողովրդական քվեարկությամբ ընդունվեց 26 տարի առաջ՝ կարեւոր դեր խաղալով մեր երկրի խաղաղ զարգացման, քաղաքական կյանքի կայունության պահպանման, ներքին ու արտաքին մարտահրավերների դիմակայման գործում:

Իր բոլոր փոփոխված տարբերակներով հանդերձ, Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը նպաստել է ժողովրդավարական արժեքների պահպանությանն ու զարգացմանը, սոցիալ-տնտեսական առաջընթացին, հանրային համերաշխության պահպանմանը:

Շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Հանրապետության սահմանադրության օրվա առթիվ, մաղթում խաղաղություն, անձնական ու ընտանեկան երջանկություն, նորանոր ձեռքբերումներ:

Լավագույն ցանկություններով՝ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյան: